



ԵՈՍՄՅԱԿԱՅԻՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ # 5

Հիմնական թեմաները

Ռոռզման ցանցերի կառուցում



Այս տարվա հունվարին կնքվեց պայմանագիրը, իսկ փետրվարից արդեն իրականացվում է Ռոռզման ծրագրով չորս համայնքում երրորդ կարգի ջրանցքների շինարարությունը: Սա հնարավորություն կտա անխափան ռոռզման ջուր ապահովել 460 հեկտար մշակվող հողերի համար: Չորս համայնքներն էլ անհամբերությամբ են սպասում կառուցվող ջրագծերին, քանի որ դա է ռոռզման ջրի հսկայական կորուստները կրճատելու իրենց միակ հույսը:

թեման ամբողջությամբ՝ էջ 2-ում

Ջրից դեպի շուկա բաղադրիչի դասընթացները շարունակվում են



Ջրից դեպի շուկա ծրագրի շրջանակներում արդեն շուրջ մեկ տարի է՝ ընթանում են ֆերմերների վերապատրաստման դասընթացները: Մարտի վերջի դրությամբ ներտնտեսային ջրի կառավարման թեմայով Հայաստանի տարբեր մարզերում դասընթաց էր անցել 8 461 ֆերմեր, բարձրարժեք գյուղատնտեսական արտադրության թեմայով՝ 527 ֆերմեր:

թեման ամբողջությամբ՝ էջ 3-ում

Մեկնարկում է վարկային բաղադրիչը



Ջրից դեպի շուկա ծրագրի վարկային բաղադրիչի նպատակն է երկարաժամկետ վարկային միջոցների տրամադրումը ծրագրի առանձին շահառուներին: Վարկային միջոցների հասանելիությունը հնարավորություն կտա շահառուների համար, կիրառելով Ջրից դեպի շուկայի դասընթացների ժամանակ ձեռք բերված գիտելիքները, գնել և տեղադրել նոր և առավել արդյունավետ տեխնոլոգիաներ ու ընդլայնել գյուղատնտեսական արտադրությունը:

թեման ամբողջությամբ՝ էջ 4-ում

ՀՄՀ-Հայաստանի բնապահպանական և սոցիալական գնահատումը




Գյուղական ճանապարհների վերականգնումն ու ռոռզման ցանցերի կառուցումը Հայաստանի տնտեսության համար զգալի ներդրում կհանդիսանա: Լավ պլանավորման պարագայում այս աշխատանքները շահեկան կլինեն նաև բնապահպանական և սոցիալական տեսանկյունից: Եվ ինչպես ցանկացած այլ նմանատիպ ծրագրի, այս դեպքում էլ, որոշակի բնապահպանական ռիսկեր կարող են առաջանալ շինարարական աշխատանքների ընթացքում: Այդ է պատճառը, որ բնապահպանական ու սոցիալական ազդեցության գնահատման բաղադրիչի առկայությունը ծրագրում ցանկալի գործոն է և պարտադրիչ նախատեսված է ՀՄՀ Համաձայնագրով:

թեման ամբողջությամբ՝ էջ 7-ում



ՀՄՀ-Հայաստանի իրականացրած գործողությունները 2008թ-ի հունվար – մարտ ամիսներին



Ռոռզման նոր ցանցեր Լանջազատ, Արովյան, Արևշատ և Գրիբոյեդով համայնքներում

Արմավիրի մարզի Գրիբոյեդով գյուղն ունի 2100 բնակիչ, որոնց 95 տոկոսը ջրօգտագործող են: Այստեղ բոլորը տեղյակ են ՀՄՀ-Հայաստանի միջոցներով կառուցվող ներտնտեսային ցանցի մասին և ակնկալում են, որ ոռոգման այս սեգմնի մեկնարկը կարվի նոր ցանցի շահագործմամբ: Կառուցվող ցանցից օգտվելու է գյուղի բնակչության 60-70 տոկոսը: Ընդհանուր առմամբ, այս համայնքում կառուցվելու է շուրջ 3300 մետր խողովակաշար:

Սոս Գաբրիելյան, Գրիբոյեդովի համայնքապետ – Մեր գյուղում ոռոգման ջրի խնդիրը շատ լուրջ է: Լավ ենք պատկերացնում՝ ինչ բան է ջրի կորուստը, քանի որ այն մեզ մոտ կազմում է 70 տոկոս: Անգամ կան հողակտորներ, որտեղ ընդհանրապես ջուր չէր հասնում, մարդիկ արդեն հույսները կտրել էին այդ հատվածներից: Հող ունենալ ու չջրել դա նույնն է որ չունենալ: Ներտնտեսային ցանցի վերակառուցումից հետո մենք այլևս կորուստներ չենք ունենա: Եվ այսօր մարդիկ պատրաստվում են այդ հողակտորներում ցորեն կամ առվույտ ցանել, վստահ լինելով, որ այս ոռոգման սեգմնին ջուր կունենան:

Գրիբոյեդովում հիմնականում խաղողի, պտղատու այգիներ են, աճեցնում են մսև կանաչի, ցորեն, առվույտ:

Եղած ոռոգման ցանցը քայքայված է, ունի 40 տարվա վաղեմություն, իսկ տեղ-տեղ էլ ընդհանրապես բացակայում է և ջուրը հողային հունով է գալիս:

Նորիկ Ամիրջանյանը ղեկավարում է Գրիբոյեդով համայնքի ներտնտեսային ցանցի կառուցման աշխատանքները: Նա ներկայացնում է «ԱԳԱԹ 777» ընկերությունը, որը ՀՄՀ-Հայաստանի հետ 2008-ի հունվարին կնքված պայմանագրի համաձայն, իրականացնում է չորս համայնքի ներտնտեսային ցանցերի վերականգնման աշխատանքները:

Նորիկ Ամիրջանյան, աշխույժ, «ԱԳԱԹ 777» ՍՊԸ – Փետրվարից աշխատում ենք: Սկզբում բերեցինք նոր խողովակներն ու կիսախողովակները, ապամոնտաժեցինք հները, հետո երբ հողն արդեն այնքան էլ սառած վիճակում չէր, սկսեցինք փորման ու տեղադրման աշխատանքները: Աշխատում ենք խիստ ծանրաբեռնված գրաֆիկով, որպեսզի ոռոգման սեգմնի մեկնարկին հասցնենք:

Լանջազատ համայնքը գտնվում է Արարատի մարզում: Այստեղ ևս շատով նոր ներտնտեսային ցանց կունենան: Այս համայնքում կնորոգվի 1700 մետր ներտնտեսային ցանց, ինչի շնորհիվ 100 տոկոսով ոռոգելի կդառնան գյուղի վերին թաղամասի տնտեսությունների

*Գրիբայեղովի ներտնտեսային ցանցը՝**նախքան վերականգնումը**Գրիբայեղովի ներտնտեսային ցանցը՝**վերանորոգումից հետո*

հողակտորները:

Հրայր Հակոբջանյան, Լանջազատի համայնքապետ – Մեր գյուղի հողերի 40 տոկոսը ջրվում է ջրամբարի ջրով, իսկ վերևի թաղամասի հողերի 60 տոկոսը կամ չի ոռոգվում ընդհանրապես կամ էլ՝ խմելու ջրով է ոռոգվում, ինչը շատ թանկ է և ոչ ձեռնառու: Հենց այդ թաղամասում էլ ՀՄՀ-Հայաստանի միջոցներով կառուցվում է երկար սպասված ներտնտեսային ցանցը: Այնտեղ հիմնականում աճեցնում են դեղձ, ծիրան, խնձոր և ելակ: Բանջարաբուստանային կուլտուրաներ աճեցնելու համար մեր գյուղի տեղանքը և հողի որակը հարմար չէ:

Թե՛ Գրիբայեղովում, և թե՛ Լանջազատում գյուղապետերը ասացին, որ ՀՄՀ-Հայաստան ծրագրին մասնակցելու հնարավորության մասին իմացել են Ջրօգտագործողների ընկերություններից, այնտեղից են

իմացել նաև համայնքների կողմից ակնկալվող 15 տոկոս համաֆինանսավորման պայմանի մասին: Ընդհանրապես, բոլոր համայնքները, որոնք ընտրվում են որպես ներտնտեսային ցանցի վերականգնման բաղադրիչի շահառու, պարտավոր են հոգալ շինարարության ընդհանուր ծախսերի 15 տոկոսը՝ նախապես քննարկելով իրենց մասնակցության հայտը համայնքային խորհուրդների և Ջրօգտագործողների ընկերությունների հետ: Այնուհետև ՀՄՀ-Հայաստանի գրասենյակ են ներկայացվում նրանց վերջնական դիմում-հայտերը հաստատման և կապալառուի ձեռքբերման նպատակով:

«ԱԳԱԹ 777» ընկերության հետ կնքված պայմանագրով ակնկալվում է, որ չորս համայնքներում կկառուցվի 6.5 կիլոմետր խողովակաշար և կիսախողովակաշար, որոնք պատրաստ կլինեն և շահագործման կհանձնավեն հունիս ամսին:

Ֆերմերների դասընթացները շարունակվում են

ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի աշխատակիցների պարբերական այցելությունները իրականացվող դասընթացների խմբերին ցույց են տալիս, որ Էյ-Սի-Դի-Այ/ՎՕԿԱ-ի և իր տեղական գործընկերոջ՝ ՎԻՍՏԱԱ կազմակերպած դասընթացները դրական արձագանքներ են գտնում ֆերմերների մոտ: Մեծ թվով համայնքներում դասընթացներին մասնակցել ցանկացողներն այնքան շատ են, որ արդեն 6-րդ, 7-րդ, իսկ երբեմն էլ՝ 10-րդ խումբն է ձևավորվում: Խմբերը հիմնականում բաղկացած են լինում 20-25 հոգուց: Դասընթացների կազմակերպման մասին գյուղերում իրազեկում է ՎԻՍՏԱԱ կազմակերպությունը, որն իր մասնագետների միջոցով գյուղապետարաններում հայտարարություններ է տարածում, մարդիկ էլ կարդում են, միմյանց ասում, դիմում են գյուղապետարան՝ ցանկություն հայտնելով մասնակցել դասընթացներին:

Արագածոտնի մարզի Արագածավան համայնքում արդեն 5-րդ խումբն էր հավաքվում, որը ցանկանում էր մասնակցել ներտնտեսային ջրի կառավարման

դասընթացներին: Ըստ գյուղապետ Անդրանիկ Պապիկյանի, դա արդեն իսկ վկայում է այն մասին, որ ֆերմերները գոհ են իրենց մատուցվող նյութից և այն լայն արձագանք է ստացել:

-Շատերն են ուզում մասնակցել, որովհետև նրանց մասնավորապես շատ է հատաքրքրում ջրաշափության թեման, դա այս գյուղում ամենամեծ խնդիրն է,- **ասում է ՎԻՍՏԱԱ կազմակերպությունը ներկայացնող մասնագետ-ուսուցիչ Սիեր Հարոյանը**, - մարդիկ ուզում են իրավական դաշտ մտնել ՋՕԸ-երի հետ հարաբերությունների տեսանկյունից: Ֆերմերը իրավունք ունի իմանալ, թե իրենց ՋՕԸ-ն ինչքան ջուր է վերցնում Ջրառից, ինչպես են կանոնակարգվում ՋՕԸ-Ջրառ և ՋՕԸ-ֆերմեր փոխհարաբերությունները: Պետք է կարողանա հաշվարկել ջրի կորուստները, պարզել, թե որ սեզոնին որքան ջուր է անհրաժեշտ իրեն ոռոգման համար և որոնք են ոռոգման ամենաարդյունավետ տարբերակները իր այգու համար:



Նույն մարզի մեկ այլ՝ Բազմադրյուր համայնքում ներտնտեսային ջրի կառավարման դասընթացներն ավարտած ֆերմերների խումբն արդեն սկսել էր հաջորդ դասընթացը՝ անցում բարձրարժեք գյուղատնտեսական արտադրության: Բազմադրյուրում հիմնականում աճեցնում են բանջարաբուստանային կուլտուրաներ, ծիրան, դեղձ, խնձոր:

Գյուղապետարանի սենյակներից մեկում հավաքված ֆերմերներին, որոնց թվում էր նաև գյուղապետը, ուսուցանողները բացատրում էին, թե ինչ պետք է անել ավելի որակյալ բերք և հետևաբար՝ ավելի մեծ եկամուտ ստանալու համար:

Մերուժան Կարապետյան, ֆերմեր - Այս դասընթացները պարտադիր պետք են ֆերմերներին: Շատ բաներ կային, որ չէինք իմանում, ասենք, թե մի հեկտար հողին ինչքան պարարտանյութ պիտի լցվի, որ մշակաբույսին ինչ պարարտանյութ է պետք և ինչքան, ոնց պիտի արվի բույսերի, ծառերի բուժումը, երբ պետք է սրսկել ծառերը: Մեր գյուղի հիմնական պրոբլեմը գյուղտեխնիկան է,- շարունակում է պատմել ֆերմերը,- գյուղտեխնիկա չունենք, որ վար անենք: Կողքի գյուղից ենք վարձում, ամեն տարի վարձը թանկացնում են: Դա իհարկե խնդիր է մեզ համար, բայց կան բաներ, որ պարզապես ճիշտ գիտելիք է պահանջում: Մարդիկ չգիտեին՝ պարարտանյութը ոնց օգտագործեն, մարզերը ինչպես սարքեն...: Մեզ բացատրում են՝ ինչ ծախսեր անես, որ զուտ եկամուտը շատ լինի, բարձր բերք ստանաս: Ոմանք ցանկանում են կաթիլային ոռոգում տեղադրեն: Անձամբ ես այս դասընթացներից հետո որոշել եմ գոնե 200 քառակուսի մետր հողի վրա պոլիէթիլենային ջերմոց դնեմ, դրա մասին այսօրվա դասից իմացանք: Դա ինձ վրա մոտ 1000 դոլար կնստի, այդքանի հնարավորություն ունեմ: Փոխարենը բերք ավելի շատ կստանամ:

Բարձրարժեք գյուղատնտեսական արտադրությանը նվիրված դասընթացների ժամանակ

տեղեկատվություն է տրամադրվում ինչպես Հայաստանի ու այլ երկրների բարձրարժեք գյուղատնտեսական արտադրատեսակների, դրանց եկամտաբերության մասին, այնպես էլ ֆերմերներին ներկայացվում են նոր տեխնոլոգիաների կիրառման մեթոդները, դրանց մատչելիությունը տեղական շուկայում, պայքարը վնասատուների դեմ և այլն:

Խոսրով Հարությունյան, Բազմադրյուրի համայնքապետ – Մինչև սեփակաշնորհումը գյուղացուն կոլտնտեսությունների մասնագետները, ագրոնոմները գոնե ասում էին՝ ինչ անել, ոնց անել: Բայց հողի սեփականաշնորհումից հետո գյուղացիների 99 տոկոսը հող մշակել չգիտեր, դրա համար լավ եկամուտ ստանալ չէր կարողանում: Էս դասերը, էս ամեն ինչը որ 10 տարի առաջ լիներ, ավելի լավ կլիներ: Այստեղ մարդիկ ոչ ծախս են անում, ոչ էլ, գալիս, նստում, սովորում են:

Գյուղապետ Խոսրով Հարությունյանը նշեց նաև, որ ներկայացվող տեխնոլոգիաները կիրառելի են, իսկ դասընթացին մասնակից ֆերմերներից ոմանք հույս հայտնեցին, որ առաջիկայում կկիրառեն դրանցից մի քանիսը:



Բարձրարժեք գյուղատնտեսական արտադրության դասընթաց Բազմադրյուրում

Շուտով հայտնի կդառնան Ջրից դեպի շուկա ծրագրի վարկային բաղադրիչի առաջին շահառուները

ՀՄՀ-Հայաստանը բաց մրցույթի միջոցով ընտրել և արդեն իսկ պայմանագրեր է կնքել երկու բանկի և երկու ունիվերսալ վարկային կազմակերպության (ՈՒՎԿ) հետ, որոնք առաջիկա մեկ տարվա ընթացքում վարկեր կհատկացնեն գյուղաբնակ շահառուներին: Այդ կազմակերպություններն են «Կոնվերս Բանկը», «Հայբիզնեսբանկը», «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ-ն և «Նոր Հորիզոն» ՈՒՎԿ-ն:

Վարկային բաղադրիչի բյուջեն 8.5 միլիոն ԱՄՆ դոլար է, վարկերը տրամադրվելու են 2-7 տարի ժամկետով: Տրամադրվող վարկի նվազագույն շեմն է 340.000 դրամը,

իսկ առավելագույնը՝ 8.5 միլիոն դրամը: Բազային տոկոսադրույքը, որը սահմանված է ծրագրի գործընկեր ֆինանսական կազմակերպությունների համար, 4 տոկոս է: Ֆերմերներին տրամադրելիս ֆինանսական կազմակերպությունները այս 4 տոկոսին կզումարեն յուրաքանչյուրն իր կողմից հայտարարված տոկոսը: «Կոնվերս Բանկի» դեպքում հայտարարվել է 6%, «Հայբիզնեսբանկի» դեպքում՝ 5%, «Նոր Հորիզոն» վարկային կազմակերպության տոկոսներն են 6.5% և 7.5%, իսկ «Ֆարմ Կրեդիտ Արմենիայինը»՝ 2.5%, 2.9% և 3%:

Վարկային բաղադրիչի շահառուների



ընտրությունը կատարում են ֆինանսական կազմակերպությունները և հենց նրանք էլ կրում են վարկային ռիսկերի պատասխանատվությունը: Վարկառու ֆերմերների ընտրությունը ֆինանսական կազմակերպությունները կատարում են իրենց և ՀՄՀ-Հայաստանի միջև կնքված պայմանագրով սահմանված որոշակի չափորոշիչների հիման վրա: Վարկառուները պետք է լինեն ոռոգման համակարգում ներդրումներից օգտվող՝

- անհատական տնային տնտեսությունների վրա հիմնված գյուղատնտեսական ձեռնարկությունները,
- գյուղատնտեսական արտադրության, վերամշակման, մարքեթինգի և ծառայությունների մատուցման ոլորտում գործող ձեռնարկությունները,
- ֆերմերային ընկերությունները, բիզնես կոոպերատիվները, գործընկերությունները,
- գյուղատնտեսական ապրանքների և ծառայությունների մատակարարները, ոռոգման սարքավորումների մեծածախ վաճառողներն ու միջնորդները,
- գյուղատնտեսության հետ առնչվող մասնավոր ձեռնարկությունները կամ գյուղատնտեսական ուղղվածություն ունեցող փոքր և միջին ձեռնարկությունները,
- այն ֆերմերները, որոնք ա) մասնակցել են Ջրից դեպի շուկա բաղադրիչի դասընթացների առնվազն 75%-ին, և բ) ընդգրկվել են Ջրից դեպի շուկա բաղադրիչի

ցուցադրական տնտեսության առնվազն մեկ գործնական դասընթացում:

Վարկերը տրամադրվում են միայն Երևանից դուրս բնակվող շահառուներին՝ գյուղատնտեսական արտադրության ամրապնդման, սարքավորումների արդիականացման, պտղատու և խաղողի այգիների ընդլայնման, տնկիների, ամասունների ձեռքբերման, փոքր հողատերերին, գյուղատնտեսական և վերամշակող արդյունաբերության ապրանքների մարքեթինգին օժանդակելու նպատակով սարքավորումների ձեռքբերման պայմանագրերի կնքման, հավաքագրման կենտրոնների, գյուղատնտեսական վերամշակման ձեռնարկությունների հիմնման և ընդլայնման նպատակներով:

Ֆինանսական կազմակերպությունների և ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի միջև վարկային բաղադրիչի կապող օղակի դերը ստանձնել է «Գյուղական ֆինանսավորման կառույց-ԾԻԳ» պետական հիմնարկը, որը, անցած տարվա հոկտեմբերին կնքված պայմանագրի համաձայն, իրականացնում է վարկային բաղադրիչի մոնիթորինգը: Սանձանակում է, որ «Գյուղական ֆինանսավորման կառույցը» գրանցում և հաշվառում է ծրագրի շրջանակներում հատկացված դրամական միջոցները, մոնիթորինգի է ենթարկում տրամադրված վարկերը, ընտրված ֆինանսական կազմակերպությունների ընտրության չափանիշներին համապատասխանությունը, դրանց կողմից ներկայացված վարկային հայտերի՝ վարկային ծրագրի նպատակներին և պահանջներին համապատասխանությունը, առաջարկություններ է ներկայացնում վարկային միջոցները բանկերին և վարկային կազմակերպություններին հատկացնելու մասին:

Կառավարման խորհուրդը հաստատեց Գյուղական ճանապարհների վերականգնման ծրագրի առաջին փաթեթի մրցույթի արդյունքները

2008-ի մարտի 28-ին ՀՄՀ-Հայաստանի Կառավարման խորհուրդը գումարեց նախկին կազմով իր վերջին նիստը՝ վարչապետ Սերժ Սարգսյանի նախագահությամբ: Օրակարգի հարցերից մեկը, և թերևս ամենակարևորը, Գյուղական ճանապարհների վերականգնման ծրագրի առաջին փաթեթի մրցույթների արդյունքների քննարկումն ու հաստատումն էր:

Առաջին փաթեթի վեց լոտերում ընդգրկված է վերականգնման ենթակա 272 կիլոմետր գյուղական նշանակության ճանապարհ: Գնումների ընթացակարգի համաձայն, ՀՄՀ-Հայաստանը մրցութային հանձնաժողով էր ձևավորել, որի կազմում ինչպես ԳՎՎԾ ղեկավարն էր, այնպես էլ՝ Հայավտոճանի և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ: Մրցութային փաթեթ-առաջարկները բացվեցին մարտի 12-ին, ՀՄՀ-Հայաստանի գրասենյակում՝ գնահատող հանձնաժողովի անդամների և

մրցութային հայտ ներկայացրած ընկերությունների ներկայացուցիչների և այլոց ներկայությամբ: Մրցույթը մեծ հետաքրքրություն էր առաջացրել, ինչը բնական է նման ծավալի նախագծերի ժամանակ: Մրցույթին մասնակցելու հայտ էր ներկայացրել 19 կազմակերպություն, որոնց մի մասը հանդես էր եկել համատեղ ձեռնարկությունների տեսքով:

Կառավարման խորհուրդը ամենայն մանրամասնությամբ քննարկեց ընտրության գործընթացը, ապա միաձայն ընդունեց մրցույթի արդյունքը: Փաթեթն ուղարկված է ՀՄԿ՝ քննության և հավանություն ստանալու նպատակով: Հաշվի առնելով նախագծի ծավալները՝ այդ գործընթացը սովորականից ավելի մանրակրկիտ է արվում և ավելի ժամանակատար է: Ամեն դեպքում, 272 կիլոմետր գյուղական ճանապարհների շինարարությունը նախատեսվում է սկսել այս տարի:



Առաջին փաթեթի շրջանակներում վերականգման ենթակա ճանապարհահատվածներն են.

ԼՈՏ 1

Մ-1 - Ագարակ - Բյուրական - Անտառուտ կմ 0+000 – կմ 8+650

Մ-4 - Բալահովիտ – Մայակովսկի - Արամուս – Կաթնաղբյուր - Ակունք - Ջառ – Սևաբերդ կմ 0+000 – կմ 6+800

Մ-4 - Բալահովիտ – Մայակովսկի - Արամուս – Կաթնաղբյուր - Ակունք - Ջառ – Սևաբերդ կմ 6+800 – կմ 15+300

Մ4-Բալահովիտ – Մայակովսկի - Արամուս – Կաթնաղբյուր - Ակունք - Ջառ – Սևաբերդ կմ 15+300 – կմ 23+100

Մայակովսկի – Նոր Գյուղ – Կոտայք – Կապուտան – Հատիս - Ջովաշեն կմ 0+000 – կմ 19+800

Արամուս – Կամարիս - Գեղաշեն կմ 0+000 – կմ 6+300

ԼՈՏ 2

Հ - 17 - Մ-9 Արտենի - Արագած - Գետափ կմ 25+940 – կմ 38+000

Հ - 17 - Մ-9 Արտենի - Արագած - Գետափ կմ 38+000-կմ 49+350

Մաստարա - Չորագյուղ - Չովասար - Գառնահովիտ կմ 2+000 – կմ 8+000

Մաստարա - Չորագյուղ - Չովասար - Գառնահովիտ կմ 8+000 – կմ 11+240

Մ-5 – Ամասիա - Նալբանդյան – Ջանֆիդա - Փշատավան կմ 0+000- կմ 14+450

Արմավիր – Նորավան – Լուկաշին – Խանջյան կմ 0+000- կմ 6+600

S-3-33 Բամբակաշատ - Ջրաշեն – Նոր Արտագես կմ 2+206 – կմ 7+810

Մ-5 – Նոր Կեսարիա - Շենավան - Գետաշեն կմ 0+000 – կմ 6+700

ԼՈՏ 3

Չինարի - Այգեձոր - Արծվաբերդ - Վերին Կարմիր Աղբյուր - Բերդ կմ 0+000 – կմ 32+505

Բերդ - Նավուր – Իծաքար կմ 32+505 - կմ 43+570

ԼՈՏ 4

Գրմաշեն - Ջովաբեր- Հրազդան կմ 6+555 – կմ 12+093 Մ-10 - Լճաշեն կմ 0+000 – կմ 1+700

Մ-10 Արծվաքար քաղամաս - Գավառ - Կարմիրգյուղ կմ 0+000 – կմ 9+200

S-4-16 Գավառ – Նորատուս կմ 2+560 – կմ 4+700

Մ-10 - Ներքին Գետաշեն – Վերին Գետաշեն – Մադինա կմ 0+000 – կմ 10+185

Մ – 3 – Մեծավան կմ 0+000 - կմ 8+534

ԼՈՏ 5

Իջևան-Գանձաքար կմ 0+000 – կմ 6+970

Անտառամեջ – Չորավանք - Գարաբակ - Այգուտ – Մարտունի – Գետիկ –Թթուջուր – Ծամբարակ - Աղբերք – Մ-14 կմ15+240 – կմ 32+020

Անտառամեջ – Չորավանք - Գարաբակ - Այգուտ – Մարտունի – Գետիկ –Թթուջուր – Ծամբարակ - Աղբերք – Մ-14 կմ 32+020 – կմ 48+800

ԼՈՏ 6

Ագարակ – Կարճևան կմ 0+000 – կմ 4+040


Մ – 2 - Չառիքափ կմ 0+000 – կմ 5+800

Ոսկետափ – Վանաշեն – Վեդի - Գաշտաքար – Ուրցաձոր կմ 0+000 – կմ 17+830

Մինչ այդ, ՀՄՀ-Հայաստանը ազդարարել էր Հ17 Արմավիր-Իսահակյան-Գյումրի ավտոճանապարհի 24,5 կմ հատվածի շինարարության մեկնարկը: Նախագծի կապալառուի՝ «Գործմիկ» ՍՊԸ-ի հետ պայմանագիրը կնքվել էր անցած տարվա հոկտեմբերին, ինչին անմիջապես հետևել էր աշխատուժի և տեխնիկայի մոբիլիզացումը: Չմեռային դադարից հետո, շինարարական աշխատանքները վերսկսվեցին ամբողջ թափով: Այս ճանապարհահատվածի շինարարությունը նախատեսված է ավարտել ընթացիկ տարվա դեկտեմբերին:

ՀՄՀ-Հայաստանի առաջընթացը բնապահպանական և սոցիալական տեսանկյունից

Որպես Բնապահպանական և սոցիալական ազդեցության բաղադրիչի ղեկավար՝ Արմինե Միմոնյանը ՀՄՀ-Հայաստանին է միացել 2006թ-ի սեպտեմբերին: Նախքան այդ, նա բնապահպանության մասնագետ էր «Ջրային տնտեսության զարգացման և բարեփոխումների ՄԻԳ»-ում, որն իրականացնում էր Համաշխարհային բանկի ծրագրերը: 2005թ-ի հունիսից նա ՀՄՀ-Հայաստան ծրագրի աշխատանքային խմբի մեջ է եղել և ակտիվորեն մասնակցել է Հայաստանի կառավարության կողմից ՀՄԿ-ին ներկայացվելիք առաջարկի մշակման փուլին: Հանդիսանալով Բնապահպանական և սոցիալական ազդեցության բաղադրիչի ղեկավար՝ Արմինե Միմոնյանը պատասխանատու է ՀՄՀ-Հայաստան ծրագրին առնչվող բնապահպանական և սոցիալական գործառույթների կոորդինացման ու ղեկավարման համար և հետևում է, որպեսզի դրանք համապատասխանեն Հայաստանի օրենսդրությանը, միջազգային պայմանագրերին, ինչպես նաև՝ բնապահպանական և սոցիալական ուղեցույցներին ու քաղաքականությանը:



*Արմեն Բողոյան, ՀՄՀ-Հայաստանի ԲՍԳ մասնագետ,
Արմինե Միմոնյան, ՀՄՀ-Հայաստանի ԲՍԳ ղեկավար,
Ջոն Քրեյգ Ուեյթֆիլդ, ՀՄԿ ԲՍԳ ծրագրի ղեկավար*

Արմինե Միմոնյանը ավարտել է Երևանի պետական համալսարանի քիմիայի ֆակուլտետի բնապահպանության բաժինը: Նա ունի տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ջրի կառավարման ոլորտում: Արմինեն նաև ունի հարուստ գիտական փորձ, մասնակցել է բազմաթիվ միջազգային դասընթացների ու կոնֆերանսների, այդ թվում՝ ՀՄԿ Համալսարանի նախածեռնած «Բնապահպանական և սոցիալական գնահատման հիմնադրույթները» թեմայով դասընթացը, ՄԱԶԾ հրավիրած Բնապահպանության ռազմավարական գնահատում թեմայով ուսուցանողների վերապատրաստումը, և այլն:

ՀՄՀ-Հայաստան ծրագիրը առաջ է ընթանում և այն պետք է պատրաստ լինի լիարժեքորեն պահպանել շրջակա միջավայրը և դիտարկել սոցիալ-տնտեսական ազդեցություններին վերաբերող խնդիրները այն համայնքներում, որոնք ընդգրկված են ծրագրի այս կամ այն բաղադրիչում. լինի դա ջրամբարների ու, ինքնահոս համակարգերի կառուցում, թե՛ ջրանցքների ու պոմպակայանների վերականգնում կամ ճանապարհային ցանցի բարելավում:

2007թ-ի սեպտեմբերին ՀՄՀ-Հայաստանը պայմանագիր կնքեց բրիտանական Մոթ Մաք-Ռոնալդ ընկերության հետ, որը խորհրդատվական ծառայություններ է մատուցում բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատման և վերահսկողության ոլորտում: Մոթ Մաք-Ռոնալդը ուսումնասիրում է ոռոգման ծրագրի յուրաքանչյուր բաղադրիչը՝ վեր հանելու համար հնարավոր բնապահպանական և սոցիալական դրական ու բացասական ազդեցությունները և առաջարկելու համապատասխան մեղմացման միջոցառումներ, որոնք կբացառեն կամ նվազագույնի կհասցնեն ծրագրի իրականացման ընթացքում ակնկալվող բացասական

ազդեցությունները:

Մոթ Մաք-Ռոնալդի միջազգային և տեղացի փորձագետներից կազմված թիմը, Երևանում հիմնադրված գրասենյակի միջոցով, արդեն մի շարք ուսումնասիրություններ է իրականացրել: Մասնագետները այցելություններ են ունեցել այն տեղանքները, որտեղ ոռոգման բաղադրիչի շրջանակներում նախատեսվում է ջրամբարների կառուցում՝ տեղանքի բնական միջավայրին ծանոթանալու նպատակով: Թիմի անդամները ուսումնասիրում են նաև ծրագրային տարածքներում հողի սեփականությանն առնչվող հարցերը: Ակնկալվում է, որ այս ուսումնասիրությունների և այցելությունների հիման վրա, Մոթ Մաք-Ռոնալդի փորձագետները ՀՄՀ-Հայաստանին բացահայտված բնապահպանական և սոցիալական խնդիրների լուծումներ կառաջարկեն:

Որպես հասարակական խորհրդակցական գործընթացի մի մաս՝ խորհրդատուն ներկայումս մշակում է հանրային խորհրդատվության պլան, որի շրջանակներում թիմի անդամներն արդեն իսկ հանդիպում-քննարկումներ են անցկացնում գյուղապետերի հետ, հանդիպում են հետաքրքրված տեղական և միջազգային հասարակական կազմակերպությունների, ծրագրի շահառու հանդիսացող անհատ ֆերմերների ու գյուղացիների հետ:

Մոթ Մաք-Ռոնալդը հետևում է նաև ծրագրի շրջանակներում աշխատող այլ խորհրդատուների կողմից իրականացվող բնապահպանական և սոցիալական աշխատանքների ընթացքին, ինչպես օրինակ՝ Արարատյան հարթավայրի գերիտոնավ հողերի բնապահպանական / հիդրոլոգիական ելակետային ուսումնասիրությանը, որն իրականացվում է ամերիկյան «MWH Americas Inc.» կազմակերպության կողմից:



Դրենաժի վերականգնում՝ առանց վնասելու շրջակա միջավայրը

- Ինչպե՞ս են Արարատյան հարթավայրում առաջացել գերխոնավ հողերը և ե՞րբ է կառուցվել դրենաժային ցանցը:

Արմինե Սիմոնյան - Արարատյան հարթավայրի գերխոնավ հողերը գոյացել են ինչպես բնական պրոցեսների, այնպես էլ մարդկային միջամտության արդյունքում: 1920-ական թվականներից առաջ այնտեղ գոյություն ունեին փոքրաթիվ բնական գերխոնավ տարածքներ՝ տեղակայված հիմնականում գետի երկայնքով: Խորհրդային ժամանակաշրջանում հարթավայրում սկսեցին աճեցնել մի շարք գյուղատնտեսական կուլտուրաներ, որոնց ոռոգման համար անհրաժեշտ էր ավելի շատ ջուր: Դա հանգեցրեց հողի գերխոնավացման և աղակալման: Այսպիսի ազդեցությունները վերահսկելու համար 1950-ական, 60-ական թվականներին սկիզբ առան դրենաժային աշխատանքները և արդեն 1980-ականներին Արարատյան հարթավայրի ոռոգման և դրենաժային համակարգերը զբաղեցնում էին շուրջ 80,000 հա տարածք: Իրավիճակը գրեթե անփոփոխ էր մինչև 1990-ականների սկիզբը, երբ Խորհրդային կարգերի փլուզումից հետո առաջացած տնտեսական ճգնաժամի արդյունքում այդ համակարգերի շահագործման և պահպանման համար հատկացվող ծախսերը էապես նվազեցին: Դա բերեց գերխոնավ հողերի մակերեսի ավելացմանը և ներկայումս Արարատյան հարթավայրի գերխոնավ հողերը զբաղեցնում են շուրջ 17,000 հա տարածք:

- Ի՞նչ է նախատեսվում անել ծրագրի շրջանակներում:

Արմինե Սիմոնյան - ՀՄՀ-Հայաստանի ոռոգման բաղադրիչի շրջանակներում նախատեսվում է վերականգնել շուրջ 24,000 հա գյուղատնտեսական նշանակության հող՝ Արարատյան հարթավայրի դրենաժային համակարգի վերականգնման միջոցով: Վերջին 50 տարվա ընթացքում Արարատյան հարթավայրը զգալի էկոլոգիական փոփոխությունների է ենթարկվել՝ ինչպես ոռոգման, այնպես էլ մարդածին այլ գործոնների արդյունքում և հիմա շատ կարևոր է, որ ՀՄՀ-Հայաստան ծրագրով դրենաժային ցանցի վերականգնումը հեթոթական հարվածը չհասցնի տեղանքի էկոհամակարգին: Այդ նպատակով որոշվեց ծրագրի վաղ փուլում բազմակողմանի ուսումնասիրություն իրականացնել և հավաքել Արարատյան հարթավայրի և գոբխոնավ հողերի հիդրոլոգիական, էկոլոգիական և տնտեսական վիճակը

բնութագրող բոլոր անհրաժեշտ ցուցանիշները, պարզել դրենաժային համակարգի տեխնիկական վիճակը և գնահատել այն հնարավոր ազդեցությունները, որոնց կարող է ենթարկվել հարթավայրը համակարգի վերականգնման արդյունքում:

- Ինչ է պարզվել ուսումնասիրության արդյունքում:

Արմինե Սիմոնյան - Ուսումնասիրությունն իրականացնում է MWH Americas Inc. կազմակերպությունը, որի հետ պայմանագիրը կնքվել է 2007թ-ի հուլիսին: Այն արդեն մի շարք ուսումնասիրություններ է իրականացրել ծրագրի տարբեր բաղադրիչների վերաբարյալ: Արդեն իսկ ներկայացված նյութերի շարքում կարելի է նշել շահագրգիռ կողմերի հետ քննարկումների պլանը, ԱՏՀ-ի վրա հիմնված որոշումների կայացմանն օժանդակող համակարգի վերաբերյալ հաշվետվությունը և մեկնաբանություններով գրականության ցանկը: Միևնույն ժամանակ մշակման փուլում են գտնվում իրավական և վարչարարական ուսումնասիրության, սոցիալական և առողջապահական գնահատման, ինչպես նաև՝ տնտեսական գնահատման վերաբերյալ հաշվետվությունները:

- Որո՞նք են լինելու հետագա քայլերը:

Արմինե Սիմոնյան - MWH-ը կշարունակի դաշտային ուսումնասիրություններն ու Արարատյան հարթավայրի էկոլոգիական իրավիճակի վերլուծությունը՝ հստակեցնելու համար դրենաժային ցանցի վերականգնման ազդեցությունը ստորերկրյա ջրերի վրա, ինչպես նաև՝ այն հնարավոր ազդեցությունները, որոնց կենթարկվեն գերխոնավ հողերը դրենաժային ցանցի վերականգնման արդյունքում: Ուսումնասիրության ընթացքում նախատեսվում է մշակվել հիդրոլոգիական և օպտիմալապես հավասարակշռված էկոհամակարգի մոդելները, որոնց արդյունքների հիման վրա կընտրվեն դրենաժային համակարգի վերականգնման այլընտրանքային տեխնիկական տարբերակները գերխոնավ հողերի դրենաժի վերականգնման ուղղությամբ: Այդ տարբերակներից յուրաքանչյուրը կգնահատվի տեխնիկական տեսանկյունից, այնպես որ մայիսի վերջին ՀՄՀ-Հայաստանը կունենա դրենաժային համակարգի վերականգնման երկու այլընտրանքային սցենար, ինչպես նաև՝ Արարատյան հարթավայրի դրենաժային համակարգի վերջնական նախագծի մշակման առաջադրանքի պայմանները: